ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1908

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20.—Բուխարեստում (Ռումինիա), արհեստավորի ընտանիքում, ծնվեց Կարապետ Աբրահամի Պալճյանը (հետագայում՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա.): Հայրը՝ Աբրահամ Կարապետի Պալճյան, մասնագիտությամբ կոշկակար, մայրը՝ Սիրանույշ Մարգարի Պալճյան (մինչև ամուսնությունը՝ Մարգարյան), ուսուցչուհի:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 23.—Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» հայկական եկեղեցում, Հարություն քահանա Սարգսյանի ձեռքով, կատարվում է Կարապետ Պալճյանի մկրտությունը: Մկրտվողին տրվում է նաև երկրորդ՝ «Լևոն» անունը:

1916

ՁՄԵՌ.—Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով, Պալճյանների ընտանիքը, թողնելով Բուխարեստը, հաստատվում է Օդեսայում, մինչև 1919 թ. գարունը:

1920

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Կարապետ Պալճյանը ընդունվում է Բուխարեստի գերմանական «Էվանգելիշե շուլե» (Evangelische Schule) դպրոցի նախակրթարանի չորրորդ դասարանը, որտեղ սովորում է չորս տարի:

1922

Գործուն մասնակցություն է ունենում «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության» («Հ. Մ. Ը. Մ.»), սկաուտական կազմակերպության և այլ մշակութային կազմակերպությունների աշխատանքներին, մինչև 1936 թվականը:

1924

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Սկսում է հաճախել Բուխարեստի «Առևտրական բարձրագույն վարժարանը»: Ուսումնառությունը տևում է չորս տարի:

1932

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Ուսանող՝ Բուխարեստի Պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում: Համալսարանն ավարտում է 1936 թ.:

1937

ՀՈՒՆԻՍ.—Բուխարեստում Լևոն-Կարապետ Պալճյանի խմբագրությամբ հրատարակվում է «Հերկ» մշակութային և հասարակական ամսագիրը: Տասներկու համար հրատարակվելուց հետո, 1938 թ. մայիսին այն դադարում է:

1940

Բուխարեստում հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» ուսումնասիրությունը: 62 էջ:

1943

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20.—Ընկերակցությամբ Բուխարեստի Հայոց Եկեղեցու ավագերեց Տ. Իգնատիոս Քիլիմյանի, ուղևորվում է Աթենք՝ հոգևորական կոչում ստանալու համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 29—30-ին Աթենքի Սուրբ Կարապետ եկեղեցում ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով ՏԵՐ ՎԱՉԳԵՆ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28.—Ընտրվում է թեմի առաջնորդական տեղապահ: ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ին ընտրությունը վավերացվում է Ռումինիայի կառավարության կողմից:

1945

ՀՈՒՆԻՍԻ 6.—Առաջին այցելությունը Հայաստան՝ որպես թեմի պատվիրակության ղեկավար՝ Տ. Տ. Գեորգ Կաթողիկոս Զորեքչյանի ընտրության առթիվ: Վերադարձ՝ հուլիսի 5-ին:

1948

ՄԱՅԻՍԻ 20.—Այցելություն Հայաստան:

ՄԱՅԻՍԻ 23-ին Մայր տաճարում ծայրագույն վարդապետության տաղը աստիճանների տվչություն՝ ձեռամբ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զորեքչյանի: Վերադարձ՝ հուլիսի 6-ին:

Լևոն-Կարապետը 7 տարեկանում.
1915 թ. Բուխարեստ

Լևոն-Կարապետը սկաուտ.
1922 թ. Բուխարեստ

1923 թ.

Աբրահամ-Սիրանուշ Պալճյան ընտանիքը, մեջտեղում՝
Լևոն-Կարապետը. 1937 թ. Բուխարեստ

Պալճյան ուսուցիչը աշակերտների հետ. 1931 թ. Բուխարեստ

ՀՈՒԼԻՍԻ 25.—Ռումինահայ թեմական պատգամավորական ժողովը միաձայնությամբ Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանին ընտրում է թեմի առաջնորդ: Ռումինիայի կառավարությունն ընտրությունը վավերացնում է նոյեմբերի 27-ին:

1951

ՄԱՅԻՍԻ 20.—Այցելություն Մայր Հայրենիք: ՀՈՒԼԻՍԻ 8-ին Մայր տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ Չորեքչյանի, կատարվում է Վազգեն ծայրագույն վարդապետի եպիսկոպոսական ձեռնադրությունը: Վերադարձ՝ օգոստոսի 8-ին:

1954

ՄԱՅԻՍԻ 9.—Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ Չորեքչյանը:

1955

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30.—Ազգային եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, քվեից բացահայտ առավելությամբ, Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Ռումինական «Օրթոդոքսիա» ամսագիրը հրատարակում է Վազգեն Կաթողիկոս Պալճյանի «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը» ռումիներեն ուսումնասիրությունը և «Մատյան ողբերգության» պոեմի վեց գլուխների՝ գրաբարից կատարված ռումիներեն թարգմանությունը: Ուսումնասիրությունը արևելահայերեն թարգմանությամբ (թարգմ. Ս. Ժամկոչյան)՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուում (Էջմիածին, 1988, էջ 191—209):

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1.—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի անդրանիկ կոնդակը համազգային-եկեղեցական վերակառուցում սկսելու և հոգևոր-մշակութային կյանքին զարկ տալու մասին:

1956

ՓԵՏՐՎԱՐԻ 1.—Ողջույն արտասահման, մասնակցելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը: Վերադարձին, ՄԱՅԻՍԻ 12-ին Մոսկվայում, վաթսուն դրպե տնող պաշտոնական ընդունելություն ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Բուլգանինի մոտ: Ժամանում Մայր Աթոռ՝ մայիսի 19-ին:

1957

ՀՈՒՆՎԱՐԻ 14.—Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակը «Համայն հայ հոգևորականության»: Նշում է այն արժանիքներն ու ներքին նկարագրի դրսևորման սկզբունքները, որով պետք է օժտված լինեն Հայ Եկեղեցու սպասավորները:

1960

ՄԱՅԻՍԻ 20.—Հայրապետական ուղևորություն Հյուսիսային և Հարավային Ամերիկա, ապա՝ Ֆրանսիա: Վերադարձ՝ հոկտեմբերի 3-ին:

1961

ՕԳՈՍՏՈՍԻ 25.—Հայրապետական կոնդակ հայ գրերի ստեղծող և հայ գրականության սկզբնավորող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1500-ամյակի առթիվ:

1962

ՄԱՐՏԻ 12.—Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակը Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանի մահվան տասներորդ տարելիցի առթիվ: Դրվատված է «տիպար հոգևորականը», նրա գործունեությունն ու գրական վաստակը, տրված են հրահանգներ տարելիցը ըստ արժանվույն նշելու մասին:

1963

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2.—Հովվապետական ալցելություն Երուսաղեմի հայոց պատրիարքությանը, Լոնդոնի, Եգիպտոսի, Հնդկաստանի հայոց թեմերին: Վերադարձ Մայր Աթոռ՝ դեկտեմբերի 26-ին:

1965

ԱՊՐԻԼԻ 24.—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի «Խոսք աղոթքի և ուխտի» խորագիրը կրող ուղերձը Ապրիլյան եղեռնի հիսնամյա սգատոնի առթիվ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի շնորհավորական նամակը Երևանում նոր հրատարակվելիք «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին: Բնութագրելով նրա դերը Սփյուռք-Հայրենիք կապերի ամրապնդման գործում, բարեմաղթվում է «լիակատար հաջողություն»:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31.—Հավարտ պատարագի Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանի բացումը Մայր Աթոռում:

1968

ՄԱՅԻՍԻ 26.—Հայրապետական կոնդակ Սարդարապատի ճակատամարտի հիսնամյակի առթիվ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9.—Հայրապետական ուղերձ «Օրհնություն Սուրբ Էջմիածնից» խորագրով քաղաքամայր Երևանի 2750-ամյակի առթիվ:

1969

ՕԳՈՍՏՈՍԻ 30.—Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ողջույնի գիրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Լոս Անջելես՝ ազգային հերոս Սողոմոն Թեհլերյանի հուշարձանի բացման առթիվ:

Վեհափառը Սարյանի հետ

Վեհափառը Վարպետի հետ

Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսը Էջմիածնի Մայր տաճարում օծում է Վազգեն եպիսկոպոսի նակատը. 8 հուլիս 1951 թ.

1970

ՄԱՅԻՍԻ 3.—Ուղևորություն Հռոմ՝ հանդիպելու Նորին Սրբություն Պողոս Զ Պապի հետ: ՄԱՅԻՍԻ 12-ին երկու քահանայապետների «Համատեղ հայտարարության» ստորագրությունը՝ նվիրված խաղաղության պաշտպանությանը: Վերադարձ՝ հունիսի 20-ին:

1971

ՀՈՒՆԻՍԻ 18.— Հայրապետական ցավակցական հեռագիր Երևան, թանաստեղծ Պարույր Սևակի ողբերգական մահվան առթիվ: ՀՈՒԼԻՍԻ 4-ին Մայր տաճարում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն հանգուցյալի հիշատակին: Դամբանականով հանդես է գալիս Վեհափառը:

1975

ԱՊՐԻԼԻ 28.— Վեհափառ Հայրապետի տասներորդ ուղևորությունը Արտասահման: Վերադարձ Մայր Աթոռ՝ հուլիսի 8-ին:

1977

ՕԳՈՍՏՈՍԻ 29.— Հայրապետական կոնդակ Կ. Պոլսի հայոց Հովհաննես Կոլոտ (Բաղիշեցի) Պատրիարքի ծննդյան երեքհարյուրամյակի առթիվ: Պատրիարքի գործունեությունը դրվատաբար ներկայացնելուց հետո, տրվում են հրահանգներ՝ հոբելյանը հավուր պատշաճի նշելու համար:

1978

ՀՈԿՏԵՄԲԵՐ 3.— Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ի օրհնության խոսքը Էջմիածին քաղաքում կանգնեցված՝ 1827 թվականին Օշականի ճակատամարտում զոհված զինվորներին նվիրված հուշարձանի առջև:

1979

ԱՊՐԻԼԻ 14.— Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի «Հայտարարությունը» Ս. Հռիփսիմե վանքի պարսպի տակ հայտնաբերված Հռիփսիմյանց նահատակված կույսերի աճյունների մասին: Գտածոն «մի հոյակապ վկայություն է հայոց քրիստոնեական հավատքի պատմանական վավերականության»:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9.— Հայրապետական կոնդակ ֆրանսահայ նկարիչ Գառզուին (Գառնիկ Հարությունի Զուլումյան) «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» արշաքանչանով պարգևատրելու առթիվ: «Ձեր անզուգական նկարչական արվեստը արգասիքն է հայկական ու ֆրանսիական մտածումի և զգայնությանց ստեղծարար ուժերու միատեղ ծաղկումին» («Էջմիածին»):

1981

ԱՊՐԻԼԻ 20.— Հովվապետական այցելություն Վիեննայի, Մյունխենի, Մայնի Ֆրանկֆուրտի և Փարիզի հայկական հոգևոր համայնքներին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 2-ին:

1982

ՄԱՐՏԻ 15.— Հայրապետական ցավակցական գիր Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանի մահվան առթիվ: «Իբրև հմուտ հայագետ, իբրև հայրենաշունչ գիտնական, իբրև առաքինի մարդ անկրկնելի էր հանգուցյալը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23.— Հայրապետական ցավակցական հեռագիր տիկին Անահիտ Հարությունյանին, ամուսնու՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Քրիստափորի (Խաչատուրի) Բաղրամյանի մահվան առթիվ: «Հայ ժողովուրդը ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի, հպարտ է մարշալ Բաղրամյանով»:

1983

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4.— Հայրապետական քարոզ Մայր տաճարում, պատարագ և հոգեհանգիստ՝ նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասատուր Ծմավոնի Մնացականյանի հիշատակին:

1984

ԱՊՐԻԼԻ 25.— Հովվապետական այցելություն Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Ֆրանսիայի հայկական թեմերին: Վերադարձ Մայր Աթոռ՝ հունիսի 19-ին:

1986

ՄԱՅԻՍԻ 21.— Հայրապետական ցավակցական հեռագիր Մոսկվա, Ա. Ա. Գրոմիկային՝ Չերնոբիլի ատոմակայանում տեղի ունեցած վթարի առթիվ: Տեղեկացվում է, որ Մայր Աթոռը աղետյալների օգտին տրամադրել է հարյուր հիսուն հազար ռուբլի:

ՀՈՒԼԻՍԻ 14.— Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի նամակը ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանին, միջուկային պատերազմի արգելման, աշխարհում խաղաղ գոյակցությունը տևականորեն հաստատելու մասին:

1987

ՓԵՏՐՎԱՐԻ 10.— Հայրապետական ցավակցական հեռագիր Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ին, Վրացական ԽՍՀ-ում պատահած տարերային աղետի առթիվ: Տեղեկացվում է, որ Մայր Աթոռը աղետյալներին օգնելու համար տրամադրել է հարյուր հազար ռուբլի:

1988

ՓԵՏՐՎԱՐԻ 25.— Հայրապետական հեռագիր ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին, Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման մասին: Հեռագիրը մնում է անպատասխան:

ՄԱՐՏԻ 13.— Հանդիսավոր հոգեհանգիստ Մայր տաճարում, Սումգայիթի զոհերի հիշատակին: Ցավակցական խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:



ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ. 1989 թ. փետրվարի 9

1968 թ. Նյու Յորք. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հետ

Մյուռոնօրհնեք. 1991 թ. սեպտեմբերի 29

Վեհափառի վերջին բարոզը

1989

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8.— Հայրապետական նամակ Մոսկվա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Միխայիլ Գորբաչովին: Հույս է հայտնվում, որ «Լեռնային Ղարաբաղի հարցը կհանգի իր արդար լուծման»: Նամակը մնում է անպատասխան:

1991

ԱՊՐԻԼԻ 30.— Հայաստանի Հանրապետության Ազգային ակադեմիայի որոշումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ին Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրելու մասին: Վկայագրի պաշտոնական հանձնումը՝ հուլիսի 21-ին:

1992

ՄԱՅԻՍԻ 28.— Հայրապետական հրահանգ Հայ Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներին, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման գործին իրենց գործոն մասնակցությունը բերելու մասին:

1994

ՀՈՒԼԻՍԻ 29.— Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը. Ազգային և հոգևոր արժեքների պահպանության ու զարգացման գործում դրսևորած անձնուրաց նվիրումի և մատուցած բացառիկ ծառայությունների համար Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինին «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչումը շնորհելու մասին:

ՕԳՈՍՏՈՍԻ 18.— (ժամը 7-ն անց 15 րոպե) Երևանում, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինը: Թաղումը՝ օգոստոսի 28-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: